№ 26. Յուլիսի 12. — 1873 — Յուլիսի 12. № 26.

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ։

Տարեկան գինն է 5 ռուբլի (փոստի ծախսով)։ Օտարաքաղաքացի բաժանորդները պիտի դիմեն այս հասցէով. Въ Тифлисъ. Въ Редакцію Армянской Газеты „Мшакъ“.

Թիֆլիսում կարելի է ստորագրվիլ խմբագրատան մէջ (Արծրունու տուն) և պ. Եստուրեանցի խանութում։

ՄՇԱԿ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ։

Մանաւոր յայտարարութիւն տպել տուողը պիտի վճարէ 10 հասարակ տառի համար 1 կոպէկ արծաթ։ Յայտարարութիւններ տպվումեն հայերէն, ռուսերէն, վրացերէն, ֆրանսիարէն, գերմաներէն և թուրքերէն։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ե՞րբ պիտի հասկանանք։—Ներքին տեսութիւն։ Նաթի հանումն Բագուի կողմերում։ Նամակ Կումիսից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Անգլիա։ Իսպանիա։ Ամէրիկա։ Իտալիա։ Նամակ Վիէննայից։—Խառն լուրեր։—Խմբագրութեան կողմից։—Փոխառութեան տոմսակներ։—Առևտրական։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Մշակ։

Ե՞ՐԲ ՊԻՏԻ ՀԱՍԿԱՆԱՆՔ

Մենք անդադար գանգատներ ենք լսում, թէ հայ-վաշխառուները հարստահարում են գիւղական թէ հայ թէ վրաց ազգաբնակութիւնը։ Անդադար այդ նիւթի վրա թէ „Մշակի“ մէջ թէ վրաց „Դրօէբա“ լրագրում տպվում են յօդվածներ, նամակներ, առանձին լուրեր...Թէ վրաց լրագիրը թէ մենք նայում էինք միշտ այդ տխրալի երևոյթի վրա անտեսական աչքով։ Մենք ուրիշ հայեացք չենք էլ կարող դցել այդ տեսակ երևոյթների վրա։

Մենք գիտենք թէ հայ-վաշխառուների պէս հարստահարող անձինքը կան աշխարհի ամեն ազգի մէջ, մենք գիտենք թէ հայոց ժողովրդի մի փոքրիկ մասը զբաղված է այդ անբարոյական աշխատանքով, մեզ յայտնի է որ Կովկասեան ամբողջ գաւառները բնակեցրած են արդիւնաբերող, աշխատասէր հայ-ազգաբնակութիւնից, մենք համոզված ենք, որ մի խումբ վաշխառուների պատճառով մենք չենք կարող ամբողջ ազգը դրոշմել հարստահարող անուանակոչութեամբ...

Բայց արդեօք կարող է նոյն աչքով նայել ամբոխը, կարող է հարստահարված, ագէս, աշխատասէր գիւղացին նայել իրան ճնշող և հարստահարող վաշխառուների վրա լոկ անտեսական աչքով, երբ նա ինքն զօհ է լինում նրանց անիրաւ վարմունքի։

Ո՛չ, չէ կարող։

Գիւղացի արդիւնաբերողը, որ 10 ռուբլ վաշխառուից փոխ առնելով, մի տարվայ միջոցում պիտի յետ տայ 10 ռուբլի վրա 20 ռուբլ. շահ,*)—գիւղացին միայն կարող է բարոյական կողմից նայել այդ երևոյթի վրա։ Այդ հարստահարողին գիւղացին համարում է իր ամենամեծ թշնամի, թէև ստիպված է նրան դիմել հարկաւոր եղած ժամանակ...։ Այդ թշնամին մեծ մասամբ վաճառական է, իսկ այդ վաճառականը հայ է,—ուստի գիւղացու հասկացողութեամբ վաշխառուն կարող է միայն հայ լինել։ Ակամայ դրոշմվում է գիւղացու ուղեղի մէջ որ հարստահարող վաշխառու և հայ անբաժանելի երկու գաղափարներ են...

Գիւղական, աշխատող, արդիւնաբերող ամբոխը ամեն տեղ կազմում է հասարակութեան ամենանահապետական և ագէս, թէև ազնիւ մասը։ Մանաւանդ այդ երևոյթը նկատվում է մեզանում։

Մի թէ ուրեմն այդ ագէս, բարի, միամիտ ժողովրդից կարելի է պահանջել որ նա զանազանէր անտեսական սկիզբը ազգային գաղափարից...։ Կարելի՞ է պահանջել որ օրինակ վրացի շինականը նայէր վաշխառուի վրա, որպէս հասարակութեան այն հարստահարող դասի ներկայացուցչի վրա որ լինում է ամեն երկրում, որ հեռանք է տընտեսական անզարգացման մի հասարակութեան մէջ, որ յայտնվում է միշտ այն ժամանակ, երբ արդիւնաբերողների և սպառողների մէջ անմիջական յարաբերութիւն չը կայ, այնպէս որ, ձարտար անձինք, որք կրթված չեն բարոյականութեան սկզբներում օգուտ են քաղում գիւղացու նեղ դրութենից և ծծում են նրանից արիւնի վերջին կաթիլը...։ Եթէ հասարակութիւնը կրթված լինէր, եթէ այդ ճարտար անձինքը լուսաւորված լինէին,—ո՞վ գիտէ, գուցէ մի օրինաւոր բանին գործ կը դրվէր նրանց ընդունակութիւնը և եռանդը։

Կարելի՞ է պահանջել...։ Ո՛չ անկարելի է...։ Գիւղացին, մանաւանդ վրացին, նկատում է միայն մի բան՝ որ վաշխառուն միշտ հայ է լինում, նա կարծում է որ հայերի ամբողջ ազգը նրա տեսած վաշխառուներն են,—նա հային համարում է վաշխառու....

Եւ ահա ծագում է առիթ երկու ազգութիւնների մէջ անհաշտելի թշնամական յարաբերութեան համար....

Մինչև որ մենք աշխատում ենք հասկացնել երկու հարևան ազգութիւնների մէջ բարոյական կապերի, փոխադարձ օգնութեան, եղբայրասիրութեան, ընդհանուր շահերի օգուտը,—մեր հայրենակիցների մի խումբ, (որք պատիւ չեն անում մեր ազգութեանը) իրանց հարստահարող վարմունքով ոչ թէ միայն հեռացնում են մեզանից վրաց գիւղական ազգաբնակութեան համակրութիւնը, բայց և իրանց վնասակար գործունէութեամբ հանում են բոլորովին հակառակ հետևանքին՝ նրանք թշնամացնում են կովկասեան վրաց ազգաբնակութիւնը դէպի հայոց տարրը, ատելի են անում հայի անունը հարևան և նոյն օգուտներ ունեցող ազգի մէջ....

Ե՞րբ պիտի հասկանանք որ հայը ամեն տեղ, թէ ընտանիքի թէ հասարակութեան մէջ ինքն իր ամենամեծ թշնամի է, որ եթէ նրան չեն սիրում, այդ այն պատճառով է, որ նա չէ իմանում իրան սիրելի անել....Հայը զարմանում է որ նրան չեն սիրում,—բայց չէ մտածում որ նա մինչև այժմ ոչինչ չէ արել, որ իրան սիրել տար։

Ամենքի կողմից լսում ենք՝ ո՞վ է մեղաւոր եթէ հայը հարստահարում է ուրիշներին, ո՞վ է մեղաւոր որ մնացած ազգութիւնները, որք հայի ձեռքն են ընկնում այնքան թոյլ, անզարգացած, ծոյլ, անընդունակ, անշնորհ են, որ այդքան հեշտ է նրանց հարստահարել...

Ե՞րբ պիտի վերջապէս հասկանանք որ ոչ մի խելօք մարդի և ոչ մի ընդունակ ազգութեան պատիւ չէ բերում իր խելքը և ընդունակութիւնը ի չար գործ դնելու...

Երբ պիտի հասկանանք, որ ոչ մի հարստահարող արժանի չէ դառնում ներողամտութեան նրա համար միայն, որ նա խելօք մարդ է....

Խելօք մարդին և խելօք ազգութեանը աւելի անհանդիսելի է իրան և ուրիշներին վնասակար լինել....

*) Տես մեր անցեալ համարի Ներքին լուրերը։

ՆԱՒԹԻ ՀԱՆՈՒՄՆ ԲԱԳՈՒԻ ԿՈՂՄԵՐՈՒՄ

Մեզ յայտնի է որ Բալախանի գիւղում քանդուել են և միշտ քանդվում են հորեր։ Միլոզյէվի հորերից մէկը, որ գնած է աւելի էժան և որոյ վերայ այնքան յոյս կապել չէր կարելի, յանկարծ սկսում է այնպիսի հրաշքներ գործել, որ գործում է ամենուն յայտնի։ Հէյզերը Խալանդիայում։

Այս տարի ապրիլ ամսում երբ հորը արդէն վերջացնելու վերայ էր և համարեա պատրաստ, լսվում է գետնի տակից ձայն, թեթև դղրդիւն, նաւթի հոլից քամու շշոց և մի քանի լոպէից յետ յանկարծ նաւթը ահագին քանակութեամբ սկսում է շատրուանի պէս վեր բարձրանալ մինչև 15 և 20 ոտնաչափ։ Առաջին անգամ անսովոր լինելով այսպիսի երևոյթի, նաւթը ժողովել չեն կարողանում, այնպէս որ, նա թափվում է գետին և մասամբ սփռվում դաշտավայրի վերայ։ Մշակները մեղաւոր որ մնացած ազգութիւնները, որք հայի ձեռքն են ընկնում այնքան թոյլ, անզարգացած, ծոյլ, անընդունակ, անշնորհ են, որ այդքան հեշտ է նրանց հարստահարել...

Ե՞րբ պիտի վերջապէս հասկանանք որ ոչ մի խելօք մարդի և ոչ մի ընդունակ ազգութեան պատիւ չէ բերում իր խելքը և ընդունակութիւնը ի չար գործ դնելու...

Երբ պիտի հասկանանք, որ ոչ մի հարստահարող արժանի չէ դառնում ներողամտութեան նրա համար միայն, որ նա խելօք մարդ է....

Խելօք մարդին և խելօք ազգութեանը աւելի անհանդիսելի է իրան և ուրիշներին վնասակար լինել....

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՒԹԻ ՀԱՆՈՒՄՆ ԲԱԳՈՒԻ ԿՈՂՄԵՐՈՒՄ

Մեզ յայտնի է որ Բալախանի գիւղում քանդուել են և միշտ քանդվում են հորեր։ Միլոզյէվի հորերից մէկը, որ գնած է աւելի էժան և որոյ վերայ այնքան յոյս կապել չէր կարելի, յանկարծ սկսում է այնպիսի հրաշքներ գործել, որ գործում է ամենուն յայտնի։ Հէյզերը Խալանդիայում։

Այս տարի ապրիլ ամսում երբ հորը արդէն վերջացնելու վերայ էր և համարեա պատրաստ, լսվում է գետնի տակից ձայն, թեթև դղրդիւն, նաւթի հոլից քամու շշոց և մի քանի լոպէից յետ յանկարծ նաւթը ահագին քանակութեամբ սկսում է շատրուանի պէս վեր բարձրանալ մինչև 15 և 20 ոտնաչափ։ Առաջին անգամ անսովոր լինելով այսպիսի երևոյթի, նաւթը ժողովել չեն կարողանում, այնպէս որ, նա թափվում է գետին և մասամբ սփռվում դաշտավայրի վերայ։ Մշակները

լացրել էր Պօլսու համալսարի (մշակների) մի կենդանի նկարագրութիւն։

Այժմ երբ մեր մէջ, ով որ ցանկանում է արժանի լինել Հայի անունը կրելու, ձեռքի եկածին չափ աշխատում է բարոյական ասպարիզում նմանել ազնիւ և գործունեայ մշակին, մենք ևս ի հարկէ սիրով մեր ուշադրութիւնը դարձնում ենք այդ տիպի վերա, աշխատելով ուսումնասիրել ծանր ախ քաշող դարիը մշեցիներու թէ անտեսական և թէ բարոյական կեանքը։

Մենք կարծում ենք, որ այս բոլորը պարտք է դնում հեղինակի վերա իւր գործը աւելի մեծ զգուշութեամբ և աշխատանքով մշակել։ Մենք նպատակ չունենք խօսել այստեղ այն բանի մասին, թէ ինչ գոյներ են պակաս պ. Քիշմիշեանցի «Մըշակի» պատկերի մէջ, մենք կը վեր առնենք պատկերը այնպէս, ինչպէս կայ։

Նախ և առաջ, անմշակ է լեզուն. իբրև օրինակ առաջ եմ բերում միայն հետևեալները.

Մթնոլորդը իր ծանրութեամբ ծանրացնում էր մարդու շնչառութիւնը»

«Ձայնի արտաշնչութիւն»

«Մէկ ձեռին հաց միւս ձեռին պանիր հերթով կծոտում էր մեծ ախորժակով»

Պարոն հեղինակը չի աշխատել սանձ դնելու իւր երևակայութեանը և մշակել սորա «արտաշնչութիւնը»։

Պատկերի հերոսը մշակ Յագոն է։ Երբ առաջին անգամ Թիֆլիզ եկաւ Յագոն, մնա կարողացել էր Պօլսու համալսարի (մշակների) մի կենդանի նկարագրութիւն։

Այժմ երբ մեր մէջ, ով որ ցանկանում է արժանի լինել Հայի անունը կրելու, ձեռքի եկածին չափ աշխատում է բարոյական ասպարիզում նմանել ազնիւ և գործունեայ մշակին, մենք ևս ի հարկէ սիրով մեր ուշադրութիւնը դարձնում ենք այդ տիպի վերա, աշխատելով ուսումնասիրել ծանր ախ քաշող դարիը մշեցիներու թէ անտեսական և թէ բարոյական կեանքը։

Մենք կարծում ենք, որ այս բոլորը պարտք է դնում հեղինակի վերա իւր գործը աւելի մեծ զգուշութեամբ և աշխատանքով մշակել։ Մենք նպատակ չունենք խօսել այստեղ այն բանի մասին, թէ ինչ գոյներ են պակաս պ. Քիշմիշեանցի «Մըշակի» պատկերի մէջ, մենք կը վեր առնենք պատկերը այնպէս, ինչպէս կայ։

Նախ և առաջ, անմշակ է լեզուն. իբրև օրինակ առաջ եմ բերում միայն հետևեալները.

Մթնոլորդը իր ծանրութեամբ ծանրացնում էր մարդու շնչառութիւնը»

«Ձայնի արտաշնչութիւն»

«Մէկ ձեռին հաց միւս ձեռին պանիր հերթով կծոտում էր մեծ ախորժակով»

Պարոն հեղինակը չի աշխատել սանձ դնելու իւր երևակայութեանը և մշակել սորա «արտաշնչութիւնը»։

Պատկերի հերոսը մշակ Յագոն է։ Երբ առաջին անգամ Թիֆլիզ եկաւ Յագոն, մնա կարողացել

նում էր երկու, երեք, չորս փթանոց բեռն շալակել»։ պէտք է ուրեմն ենթադրել, որ նա գոնեա 15 տարեկան տղայ էր։ 8 երեսից տեսնում ենք, որ Յագոն 40 տարի մշակութիւն էր անում, ուրեմն նա, շատ չասեմ, մօտ 55 տարեկան մարդ էր։

Այժմ տեսէք, ինչ tours de force-ներ է անում այդ 55 տարեկան մարդը։ Երբ մի քանի երիտասարդ առաջարկում են մի մանէթի համար մշակների խումբին, ինչպէս Ջիրիթի ժամանակը, «երեք ջէր պատել էս տան չորս կուռը» պրիզը 55 տարեկան Յագոն տարաւ։ Զարմանալի է, որ 5-րդ երեսում, երբ դուքնի աչկերա Սանդրոն մշակներին ձայն տուեց, Յագոն չփոփոխեց իր ոյժը ուրիշների առաջը կտրելու, թէև նա գիտէր որ «մկավան ժամանակը մէ գրոշի էլ պտի դաբուլ ըլնես»։

Յանկարծ նոյն 55 տարեկան երիտասարդը 18 փթանոց հակներ է մէջքին կրում....

Հեղինակը, մի նոր գիւտ է արել. նա գտել էր Թիֆլիզում «ահագին հրապարակներ»։ Թիֆլիզի քուչաներում «փոքր տղայի ձայնը սաստիկ արձագանք է տալիս»։

«Քաղաքացին իր օգտի համար ինչ է որ բեռան տեղը հասցնելու համար մշակին քիչ վարձ տայ միշտ (?!) իւր տունը մօտիկ է ցոյց տալիս, բայց շատ (?!) հեռու է տանում»։

Մենք կարծում ենք, որ այդ շատ վատանդաւոր և անհիմն տէօրիայ է, մէկին բարձրացնելու համար՝ միւսի պատիւը ստորացնել.

«Կիրակի օր էր։ Մի հրապարակի վերա ժողովուել էր անթիւ բազմութիւն»

Որքան մեզ յայտնի է, կիրակի առաւօտները Թիֆլիզում, առանց պատճառի, ոչ թէ անթիւ բազմութիւն, այլ և բազմութիւն չէ հաւաքվում։ Մենք ընդհակառակը նկատում ենք, որ Թիֆլիզում կիրակի օրերը փողոցները և հրապարակները դատարկ են լինում, ինչպէս այդ բանը նկատվում է զորօրինակ, և Գերմանիայի քաղաքներում՝ ժողովուրդը սիրում է քաղաքից դուրս այգիներում քէֆ անելով հանդստանալ իւր չաբաթուայ աշխատանքից։

Վերջապէս դարձնում ենք ընթերցողի ուշադրութիւնը պ. Քիշմիշեանի մի փիլիսոփայական—հասարակական կարծիքի վերա, այն է որ «կուչտ փորը միայն գիտէ տրտնջալ», որպէս զի այս երևելի միտքը իզուր չկորչի, ես իսկոյն առաջարկում եմ ընթերցողին մի գործնական հետևանք։ Եթէ ձեր կինը, ձեր որդին, ձեր ծառայն տրտնջում են, հարկաւոր է նոցա միայն մի քանի օր սոված թողնել, այն ժամանակը նոքա այլ ևս չեն տրտնջալ։

Թող պ. Քիշմիշեանցը աւելի ուշադրութիւն դարձնի այն սխալների վերա, որ նա կարող է ուղղել, մենք կարող ենք հաւատացնել պարոն պովէտին, որ նա չի պատկանում այն հեղինակների կարգին, որոնց սխալները մինչև անգամ հետաքրքրելի են մարդկութեան համար։

* *

'ի հարկէ սասակի վոխնում են և շուտով իմաց են տալիս Միրզոյէվի գործակատարին Բաղվում. (ասում են համբաւաբերը առատ վարձատրում է)։ Այդ երևոյթը մի շաբաթ շարունակ կրկնվում է օրը մինչև 8 անգամ շատրուան գձելով և բարձրացնելով երբեմն փոքր ինչ զանազան ձևի քարեր մինչև 9 և 15 ֆունտ։ Նաւթը շատ մաքուր կերպով է դուրս գալիս։ Իւրաքանչիւր շատրուանը, ինչպէս ասում են ամէն անգամ բարձրացնում էր համարեա 1000 փութ. իսկ ամբողջ օրուայ մէջ միջին թուով 6000 փութ։ Նաւթը չը փչանալու համար շուտով շինում են մի մեծ աւազան, այնպէս որ, բոլոր նաւթը թափվում է դրա մէջ և յետոյ հոսում համբարանոց։ Այժմ թէև շատրուանը գործում չէ. բայց դեռ մեծ քանակութեամբ ստացվում է նաւթ 3000-ից մինչև 4000 փութ իւրաքանչիւր օր։

Նաւթը Բաղվում առաջ խալվարը (20 փութ) արժէր 9 մանէթ. և այդ գնով ծախվում էր մինչև ապրիլ։ Խոստովանենք ճշմարիտը, որ մեր նաւթ գնողները շատ նեղութիւն էին կրում նաւթ գնելու ժամանակ. առաջին, շատ տանել ու բերել էին տալիս նրանց, երկրորդ, դրամաթուղթը մի թէթև ճնաստուած ժամանակը չէին ընդունում և սրանց նման մի քանի անշան պատճառներով նեղացնում էին։ Յանկարծ ապրիլ ամսին ինչպէս ասացինք պատահեց այդ անցքը և բայի նրանից ուրիշ հոգին էլ սկսեցին առատ նաւթ դուրս բերել։ Զորօրինակ մի քանի ընկերութեանց հորերը սկսեցին դուրս հանել օրը մինչև 4000 փութ (Պօկորեվինը առաջ էլ տալիս էր այդքան)։ Այս հանգամանքները իհարկէ, մեծ փոփոխութիւն արին նաւթի գնի մէջ... խալվարը 9 մանէթը այժմ փոքր առ փոքր պակասեցաւ 6-ի, 4-ի և մինչև 1 մանէթի։

Թէև նաւթը միևնոյն քանակութեամբ դուրս էր գալիս. սակայն գինը կրկին բարձրացաւ. բայց այս անգամ հասաւ մինչև 5-ի։ Դրա պատճառը սա էր. վերը յիշած ընկերութիւնները և Միրզոյէվը տեսնելով, որ այդպէս ծախելը շատ օգտակար չէ. պայմանաւորեցան 5 մանէթից պակաս գնով չծախել։ Բայց սա էլ երկար չտևեց. նաւթի հորերը սկսեցին առաջուանից աւելի դուրս բերել. մի քանիսը պայմանին հաստատ չկացան, իսկ այն անձինքը, որոնք դրանց մասնակից չէին իրանց հորերի նաւթը սկսեցին կրկին աժանացնել, այնպէս որ, Բաղվում այժմ նաւթը արժէ 2—3 մանէթ։

Նաւթի լաւութիւնը իմացվում է անօսրաչափի (ареометръ) Ռէօմիւրի 14 աստիճան տաքութեան մէջ եղած ժամանակ։ Անօսրաչափով կարելի է առաջինը իմանալ թէ որչափ խառնուրդ կայ նաւթի մէջ. կամ որչափ զուտ նաւթ և երկրորդ նրա տեսակաւոր կշիռը (удѣльный вѣсъ), թէև այս վերջինը իմանալու համար փոքր ինչ ուրիշ ձև են տալիս գործիքին։ Անօսրաչափերի շինելուն և նրանց ինչ հիման վրայ գործողութեան համար կը լռեմ. միայն յաւելացնելով, որ նա շատ նման է ալքոհոլաչափի (спиртомѣръ), որ գործ է ածվում համարեա ամենայն բարեկարգ օղեաուններում։ Տաքութիւնը շատ մեծ ազդեցութիւն ունի նաւթի լայնանալուն կամ սեղմելուն. վասնզի միշտ պէտք է չափել միևնոյն տաքութեան ժամանակ. հասարակօրէն այդ կէտը Բաղվում 14 աստիճանն է Ռէօմիւրի ջերմաչափով։

Բաղուից 15 վերստ հեռաւորութեամբ հիւսիսարևմուտք գտնվում է մի տղմային հրաբուղխ (грязный вулканъ)։ Թէև այժմ նա գործում չէ սաստկապէս. բայց դեռ հանդած էլ չէ բոլորովին։ Այդտեղ տղմից ձևացած են վիժման կոնուս (конусъ изверженія) և վիժման բերան (кратеръ изверженія)։ Խառնարանը (жерло) համարեա փակուած է. իսկ նրա տեղ բարձրացած են երկու փոքրիկ կոնոններ, որոց գագաթից դուրս են գալիս պղպջակներ։ Նրանք կոնոններից մէկը հոգով ծածկում են և մի փոքր ժամանակ այնպէս պահում մի որևիցէ առարկայով. ապա բաց թողած ժամանակը իսկոյն տիղմը բարձրանում է վեր և չորս կողմը ցրվում։ Տիղմը մոխրագոյն է կամ աւելի ապիտակ։ Զորացած ադմի մէջ շատ դեղնագոյն մեռապեայ կտորներ են փայլում. մի քանի կտոր ժողովելով և կրակի մէջ գձելով ատացվում է դեղնագոյն հալուած։

Մի ուրիշ տղմային հրաբուղխ Սարբուդա անունով հանում է ծծմբախառն տիղմ (լուսած եմ). չոր տիղմը այրած ժամանակ արձակում է կապույտ բոց։ 25 սաժէն այդ հրաբղխից հեռու դուրս է գալիս սև նաւթ. բայց շատ սահմանափակուած. քանակութեամբ։

Բաղաքից 60 վերստ հեռու ծովի ափում գտնվում է մի սար, Ռեօթա-լըշլը անունով, որի գագաթումն կայ շատ. պարզ ու վճիտ խմելու ջուր։ Ստորոտներումն կան նաւթի նշաններ։

Ծովի ափում կայ նոյնպէս մի տեղ Ռըբեյրաթ անունով, ուր դուրս է գալիս նաւթ. բայց բոլորը ժողոված հալիս թէ լինի 300 փութ օրը։ Ռըբեյրաթը Բաղախանուց յետո առաջինն է նաւթի դուրս գալու քանակութեամբ. այդ տեղ հորերը աւելի շատ երես են. քան թէ Բաղախանու։ Պարելի է կարծել, որ եթէ հորերը աւելի խորացնեն, նաւթը աւելի շատ կը ստացվի, որովհետև այդպիսի մի փորձը շատ յաջող հետևանքի բերաւ և այդ իսկ հորից այժմ Ռըբեյրաթում դուրս է գալիս ամենամեծ մասը բոլոր այնտեղի նաւթի։ Ռըբեյրաթը „ծովային կրակների" մօտ է։

Բացի սրանցից շատ տարբեր ստորոտներում գտնվում են նաւթի տեղեր կամ հրաբղխական մեռացորդներ։ Այս պատճառաւ ժողովուրդը պատմում է շատ հետաքրքիր պատահմունքներ. զորօրինակ, ասում են թէ Բաղուից փոքր ինչ հեռու մի հովի մէջ իջած է լինում մի անգամ ոչխարների հոտը... յանկարծ դեռ տինը ճեղքվում է և իւր մէջ կլանում բոլորին։

Դէ այսպէս մեք տեսանք, որ Բաղուի մօտ դուրս են գալիս գաղ, նաւթ, հրաբղխական տիղմ և այլն։ Այս վիժմունքներով դուրս են գալիս երկրաշարժութիւն պատճառող հրաբղխական գործիքները։ Սրա համար Բաղուն ենթարկվում է բազմաթիւ երկրաշարժի. մինչև դեռ Շամախին և նրա մօտակայքը, որ հեռու են Բաղուից 70—100 վերստ այնքան սաստիկ արկածներ են կրում (և առաւելապէս իսկ քաղաքը)։ Ուսումնականների նկատողութիւններից երևում է, որ Շամախու տակ պէտք է լինին ահագին քանակութեամբ վիրը յիշած առարկաները և նրանց հրաբղխական զօրութիւններից յառաջանում են երկրի մակերևոյթի սասանումներ — երկրաշարժութիւն։ Այդ պատճառաւ մի քանի ինժիներք առաջարկել են քանդել գիտինը բաւականին խոր յոյս տալով, որ կարող են հանել գաղ կամ միւս գործիչներից մէկին. բայց մինչև այժմ մի դրական հետևանք չեն ստացած և Շամախին օրաստորէ աւելի երկիւղալի է դառնում։ Ասում են թէ Շամախու զիւղերից մէկի մօտ մի սարի սորոտում, անցեալ տարուց սկսած լինում են երբեմն հրաբղխական տղմի և ծխի վիժմունքներ։

Աղեքսանդր Քալանթարեանց։

22 յունիս ի Բաղու։

ՆԱՄԱԿ ԿՈՒՄԻՍ ԳԻՒՂԻՑ

Կումիս գիւղը գտնվում է Թիֆլիսից 22 մղոն հեռաւորութեամբ դէպի հարաւ շարունակվող մանր սարերի տակը. երեսը դարձրած դէպի արևելք։ Արևմուտքից շրջապատված է սարերով, հարաւ հիւսիսից բլուրներով, իսկ արևելեան կողմի մի հիանալի և մեծ դաշտով որ հասնում է մինչև Եաղլուջա սարի սորոտը և աղի լճի շրջակայքը։

Այդինները տներն մօտից կոված, փռվում են դաշտի վրա համարեա մինչև մեծ ճանապարհը (որ մինչև 1871 թիւը փոսաի ճանապարհ էր)։

Երկիրը շատ բարեբեր է և պտղատու, հողը սև, կլիման բարեխառն։ Շրջապատած լինելով երեք կողմից սարերով և բլուրներով ձմեռը ազատ է հիւսիսային ցրտաշունչ քամուց, իսկ ամառը բաղմաթիւ ծառերը բարեխառնում են օդը։

Գիւղը բաղկացած է (անցեալ ամսվայ հաշվով) ընդամենը 171 տնից, որոնցից 140 տուն հայեր են և 31 տուն վրացիք։ Ամէն մարդ ունի դաշտ՝ վարուցանք անելու։ Ինքն ժողովուրդը վայրենի բնաւորութիւն ունի՝ միշտ վէճեր, կռիւներ, ծեծել ծեծվիլ...։ Վէճերը վճռումն են սուդիէքը (քեօխվէքը)։ Մին տանուտէր կայ (մամասախլիս) 2 էլ սուդիա։ Մինչև հիմա մէկ սուդիա կարողանում էր դատ կորել, վճիռ տալ առանց միւսների, բայց հիմայ մինչև երեք միասին չը լինեն, չէ կարելի։

Այս տարի արտերը շատ լի են։ Շերամը շատ աջող է։ Գիւղիս չորս կողմը ոչ մի գիւղ այնքան այգիք չունի, ինչքան որ սա։ Այս տեղի մրդերը յայտնի են և խաղողը համեղ։ Գինին առաջին ամիսներում շատ անուշ է, իսկ քիչ ժամանակից սկսում է քացխել, բայց ով կարողութիւն ունի, պահում է գինին, մինչև միւս տարի, և այն ժամանակ գինին շատ աղնիւ է լինում։ Հիմի էլ կը գտնուի տուն, որ ունէ պահուած անցեալ տարուանից գինի։

Դաշտերը դեղնել էին, բայց նորից կանանչել են, արտերը հասել են, հնձելու վրայ են, դարին արդէն կալերով կասում են, ցորենը եկող շաբթին կը կասեն։ Գիւղացիք ասում են, թէ եօթը տարի կը լինի որ էս ժամանակիս էսպիսի անձրևներ տեսած չեն։

Որոնք որ ցանած են, շատ ուրախ են, իսկ որոնք չունեն ցանած փոշման են։ Եկող տարին համարեայ բոլորեքեանքն էլ ցանելու միտք ունեն։ Որոնք որ չէին ցանել կարծումէին թէ՝ այս տարի էլ անցեալ տարիների նման անաջող կը լինի, բայց չեն իմանում, որ եթէ մի տարի երաշտութիւն լինի, հաւանական է, որ միւս տարի հակառակ կը լինի։

Շերամը այնքան առատ է որ մի տարի այսպէս եղած չէ։ Բոլորն էլ ունին՝ մի մաս արդէն վերջացրել է, միւսների բուժուը դեռ չի պնդացել, շատերը դեռ նոր են ճիճուներ հանել։ Ինչպէս շատ են, որ թթենու տերև չկայ, որ տան ուտելու։ Ինչ թթենի ծառեր կային, բոլորն էլ տերևներ կըտրած են։

Ինչպէս ասացի վերջին տարիներս ժողովուրդը շատ խեղճ դրութեան մէջն էր։ Անձրև չը կար, արտերը այրվում էին, խոտերը չորանում, կամ յանկարծ անձրև գալիս էր, բայց հետն էլ կարկուտ։ Մանր պտուղներ սկսում էին վայր թափել, խաղողը այս չորս տարի է, որ թոզ էր նստում, շերամը փչանում էր։ Այսքան ՁԼասներից խեղճերը ստիպված էին լինում ուրիշ գործով պարապելու, ինչպէս իրենց տանից հեռու գիւղեր գնալ մշակութիւն անել, կամ այնտեղից քրեհ տանել, քաղաք (Թիֆլիս) ձմերուկ, խարբուզակ, չամամ, բերել։ Շատերը խաչնարածութեամբ էին պարապում։ Սրանից եկած օգուտը կրկին հացի, շերամի և այգիների վրա էին գործ գնում, որ յաջողի։

Միայն փոքր գումար ունեցողներին աջողվում էր մի բան՝ պահել կովեր և քաղաքում ծախելով կաթ, մածուն, սեր,—իրենց համար ապրուստ ճարել։ Կամ անտառներից հաւաքում էին սունկ (սոկո) մօրի, յուն, փոքր տանձեր, մօշ, մամուխ կամ կանանչեղէն խոտեր, բանջար, բալբայ որ տանելով քաղաք, ծախած փողերով առնում էին հաց ու ձուկ։

Զը նայելով այսքան ՁԼասներին, նորա իրենց ընտանեկան կեանքի կանոնները չէին կոտրում, նոյն նահապետական կերպով շարունակում էին ծանր աշխատանքը։ Այն խեղճերը որք ունէին ցանած հաց, չունէին ուտելու։ Գարին կասումէին և տանում քաղաք ծախելու, հաց առնելու համար։

Բնութեան ամէն տուրքերից առատ է կումիսը, բացի մի անհրաժեշտ բանից,—այն է ջրից։ Ոչ մի տեղ օրինաւոր աղբիւր չը կայ որ կարողանայ կումիսը (սահիսը) հինգ բոպէում լցնել։ Փոքր աղբիւրներ շատ կան, բայց անպէտք են։ Միայն սարերից վազում է մի փոքրիկ առուակ գիւղի միջով և թափվում է Աղի լիճը։ Վերի թաղը գիւղի դործածելով, կեղտոտում է, այնպէս որ ներքև գալով, ջուրը անպիտան է լինում։ Այս ջրով է, որ հաղիւ թէ կարողանում են այդինները ջրել։ Ահա գիւղիս մեծ պակասութիւնը։

Տարէն ամբողջ գիւղը տալիս է դեռնի, արքունական հարկ մինչև 1150 բուբլ, բացի զանազան պարտիներին տուրքերից։ Հարուստները այստեղ էլ մեծ դեր են խաղում....

Յունիսի 1873 Մուրադ...

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ընթերցողին արդէն յայտնի է Սողոմոն Վարդանեանցի կտակի մասին որ թողել է զանազան ուսումնարաններին բաւական գումարներ։ Կտակի զօրութեամբ երեք մաւրհակներ, որոնցից ամէն մէնը 10 հազար բուբլ է ներկայացնում. մի մաս կնոջ և ազգականներին է կտակվում, մնացածից 4000 բուբլ Թիֆլիսի Ներսիսեան գպրոցին է կտակվում, որ այդտեղ մի չքաւոր որդեղեր պահվի այդ գումարի տոկոսներով և կրէ հետևեալ անունը՝ որդեղեր Թիֆլիսի քաղաքացու Սողոմոն Վարդանեանցի։ Յետոյ զանազան փոքր գումարներ կտակվում են զանազան ծխական ուսումնարաններին և եկեղեցիներին։ Վերջապէս 4000 և մի հարիւր բուբլ կտակվում է ի սեփականութիւն կտակակատարներին՝ Եղիշէ քահանայ Տէր Գրիգորեանցին և քաղաքացի Սողոմոն Խեչումեանցին, թաղման ծախսը գործ դնելու համար։ Կտակը օրինաւոր կերպով է գրած, և յոյս կայ որ դոնէ այս կտակը անկարելի կը լինի ուրիշ կտակների պէս ոչնչացնել։ Այս մասին շատ աշխատանք ունի նոյն քահանայ Եղիշէ Տէր-Գրիգորեանց կտակակատարը, որ բոլոր ջանքը գործ դրած է կտակին օրինական կանոնաւոր ձևերը տալու, որպէս զի նա անմատչելի լինի։

***

Մենք լսում ենք որ հինգշաբթի օրը յուլիսի 12-ին օրիորդ Բիչուրինա պիտի մի կոնցերտ տայ Թիֆլիսի Կլուբում (գօլովինսկի պրոսպեկտ, Մուխրանսկու տանը)։ Օրիորդ Բիչուրինայի ձայնը վաղուց է որ իսստանում էր ժամանակով նշանաւոր լինելու։ Այժմ մօտ երկու տարի Պետերբուրգում ուսում առնելուց յետոյ, ասում են որ նրա ձայնը մշակվել է և ստացել է հաստատութիւն։

***

Ինչպէս ընթերցողը կարդացած կը լինի Խառնլուրերում, ռուս Тиф. Вѣст. լրագիրը հաղորդում է, որ արագի և ծխախոտի վրա ակցիզը մոցնելու պատճառով 6000 մշակ կը մնան առանց աշխատանքի։ „Кавказъ" լրագիր կիսապաշտօնական կերպով պատասխան է տալիս այս հաղորդութեանը հետևեալ ձևով՝ ակցիզ մոցնելուց առաջ Թիֆլիսում հաշվում էին 573 միկիտաններ, իսկ յուլիսի 1-ից արդէն ոսում է իրաւունք 516 միկիտաններ բաց անելու և դեռ շարունակվում է նրանց բաց անելու թոյլ տուութեան թղթերի տալը։ Ինչ կը վերաբերի ծխախոտի գործարաններին, ակցիզից առաջ նրանց թիւը 3 էր, որք իրաւունք ունէին այդ անունը կրելու։ Իսկ այժմ նրանց թիւը ութն է և դեռ յոյս կայ որ կառաջարկվին դարձեալ բացման խնդիրքները։ Այն խանութները որք մեծ մասամբ ծխախոտ կտրելու մի մի մեքենայ ունէին, և որոնց երեսի Тиф. Вѣст. ֆաբրիկայի անուն է տալիս, նրանք արդէն վկայութիւն վերցրած են ծխախոտ ծախելու իրաւունք ունենալու համար, ծխախոտը նրանք պիտի առնեն ֆաբրիկաներից, որոց թիւը այժմ աւելի մեծ է քան թէ ակցիզ մոցնելուց առաջ, և ծխախոտու սիգարների գործելը աւելի ընդարձակ է։ Այդ պատճառով շատ մշակներ, որք առաջ մեծ թէ փոքր խանութներում էին գտնվում, այժմ կը զբաղեն պարապմունք ֆաբրիկաների մէջ, որտեղ որ կենդրոնացած է բոլոր ծխախոտի գործելը։

**

„Русскій Міръ" լրագիրը հաղորդում է, թէ զինուորական նախարարութեան նոր կանոնադրութիւնը դործադրվելու է 1874 թուականի նոյեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

Յունիս ամսին գաղտնի խորհրդարանի փոխնախագահ պ. Ֆօրստէր, որի կառավարութեան տակ գտնվում է ազգային լուսաւորութիւնը, ներկայացնելով պարլամէնտի հաստատութեանը այդ առարկայի մասին անելու ծախսերի ցուցակը, ներկայ տարվայ ընթացքում, մի և նոյն ժամանակ հաղորդեց քանի մի հետաքրքիր տեղեկութիւններ Անգլիայի ազգային լուսաւորութեան մասին։ Գումարը որ պիտի ծախսվի ազգային լուսաւորութեան գործի վրա ներկայ տարվայ ընթացքում հասնում է 1,299,603 ֆունտ ստէրլինգ։ Երեխաներին թիւը, որք այցելութիւն են անում ուսումնարաններին հասնում է 1,557,910։ Անցեալ տարին երեխաների թիւը կէս միլիո-

նով պակաս էր։ Ցերեկվայ ուսումնարանների թիւը 14,100 է, որտեղ ուսանում են 1,607,511 աշակերտներ։ Զը հաշվելով ուսումնարանների կառավարիչներին և նրանց օգնականներին (որոց թիւը 3646 է) միայն ուսուցիչների թիւը 21,297 է։ Ընդհանուր ամենայնիւ մինիստրը յայտնեց յոյսը որ ուսումնարանները այցելող երեխաների թիւը դարձեալ կաճի և կը հասնի 3 միլիոնի։

ԻՍՊԱՆԻԱ

Իսպանիայի խռովութիւնները չեն դադարում ոչ ցամաքի վրա ոչ էլ կղզիներում։ Յունիսի 30-ից հաղորդած լուրերին նայելով Հավանայի դաշնակցական հանրապետական կուսակցութիւնը հրատարակեց մի աղդարարութիւն, որտեղ հրաւիրում է բոլոր կուսակցութիւններին՝ թողնել թշնամական յարաբերութիւնները, միանալ միմեանց մէջ և բացարձակ յայտնել հանրապետութիւնը։

Յուլիսի 5-ից հաղորդում է Մադրիդից միջազգային հեռագրական ընկերութիւնը, որ Կարթագէն քաղաքում ապստամբվածները պաշարեցին քաղաքը Կոնտրերաս զօրապետի առաջնորդութեամբ։ Պատմում են որ ապստամբվածները իլանց ձեռքը կը զցին և զինուորական նաւերը։

ԱՄԷՐԻԿԱ

Մորմոկ անունով կարմիր ինդիանների հետ պատերազմը վերջացաւ և նրանց գլխաւորը կապիտան Ջէկ բռնվեցաւ։

Մէխիկայից հաղորդում են, որ կառավարութիւնը հրամայեց կալանաւորել բազմաթիւ աբեղաներին և կոյսերին, որովհետև վանքերը պաշտօնապէս վերցնելուց յետոյ, նրանք (աբեղաները և կոյսերը) մասնաւոր տների մէջ կենալով, միմեանց հետ անբարոյական յարաբերութիւններ ունեցած են։ Կոյսերին դարձեալ ազատութիւն շնորհեցին, իսկ աբեղաներին դիտաւորութիւն կայ սաստիկ պատժելու։

ԻՏԱԼԻԱ

Նորերումս ստորագրվեցաւ այն օրէնքը, որի զօրութեամբ ամբողջ Իտալիայում պիտի վերցնվին վանքերը և կրօնական միաբանութիւնները։ Սփոսս որ ոչ մի լրագիր չէ խօսում թէ ինչ աչքով իտալական տէրութիւնը պիտի նայէ Հայոց Մխիթարեանց ուխտի միաբանութեան վրա։ Բայց մեզ յայտնի է որ մի քանի տարի սրանից առաջ, իտալական տէրութիւնը նայում էր Մխիթարեանների վրա, ոչ թէ որպէս լոկ կրօնական, այլ որպէս ուսումնական միաբանութեան վրա։ Յանկալն կը լինէր եթէ մեր Մխիթարեանները ուրիշ ելք չեն ունենայ, թողնէին կրօնական կոչումը և կազմակերպվէին որպէս Հայոց աշխարհական ուսումնական ընկերութիւն։ Իտալիան այդ կողմից մեծ ազատութիւն է վայելում։

Հռոմի Պապը կամենում է նզովել այն անձին, որ գլխաւոր պատճառ է եղել կրօնական միաբանութիւնների վերցնելուն։ Իտալական „Gazzetta Ufficiale“ հրատարակել է յունիսի 25-ին թագաւորական հրաման կրօնական միաբանութիւնների վերցնելու վերաբերութեամբ։

Պապը նորերումս ընդունեց իր գահակալութեան 28-որդ տարեդարձի առիթով 200 հիւրեր որոնց թւում և Իզաբէլլա Իսպանիայի աքսորված թագուհուն։ Պապը յայտնեց նրան իր ցաւակցութիւնը նրա հայրենիքի անդադար խռովութիւնների մասին։

ՆԱՄԱԿ ՎԻԵՆՆԱՑԻՑ

Վերջին նամակիս մէջ Վիեննա գալու դիտաւորութիւնս յայտնելով՝ խօստացել էի այլ և այլ տեղեկութիւնք հաղորդել «Մշակիդ» աշխարհանդիսի վրա։

Գալս աւասիկ մէկ չաբաթ եղաւ և արդէն քանից անդամ այցելութիւն արի տիեզերահռչակ հանդիսին. սակայն պարզ խօստովանում եմ որ դեռ միայնդամայն անզօր եմ որոշ հաշիւ տալ իմ տեսած հրաշալեաց վրա։ Ճարտասանական ձևի համար չեմ գործածում հրաշալիք բառը. այլ կամենում եմ արտայայտել այս խօսքով թէ երևակայութեանս մէջ անդամ յանդգնած չէի պատկերացնել ինձ այն աքանչելիքը, որք հոյակապ փառաք և չոչափելի իրականութեամբ դրուած են բիւրաւոր դիտողաց առջև։

Ցիւրիխեան լճի անդորրաւէտ եզերքը, կանգուտակ ջրերը, զուարթ հովիտները, ձիւնապակ լեռները թողնելով յանկարծ Վիեննայի աշխարհահանդեսը բերուին չատ դիւրին գործ է. սորա համար պէտք է միայն քսան ժամ։ Սակայն դիւրին բան չէ Զուիցերիոյ լուիկ շրջանից անմիջապէս այս բաղմաշփոթ ասպարէզն ընկնելուց յետոյ կանոնաւորել և մարսել այն հաղար ու մի նոր տպաւորութիւնքը, որք ամեն մի քայլափոխին ճնշողական բռնութեամբ աղդում են եկաւորի մտքի վրա և համարեա խպառ թալկացնում են նորա զգայարանքը։

Արդէն վեց եօթն անդամ յաճախեցի աշխարհահանդէս և չնայելով որ առ այժմ ամբողջութեան վրա միայն ընդհանուր գաղափար կազմելու համար չատ արագում էի քայլերս, բայց և այնպէս հսկայական հանդիսի անթիւ բաժիններից կէսն անդամ չկարացայ աչքէ անցնել և վերջին անդամ յոգնած, դադրած՝ մահմետական մզկիթի դէմ յանդիման մի երկաթեայ թաւաքաչ առիւծի պատուանդանի վրա նստելով՝ վկայ կոչեցի մարգարէի սուրբ մօրուքը, որ այսուհետև զէթ մի քանի օր հանդիստ չնորհելու եմ յոգնաչարչար դլխիս։

Երկու օր է որ կատարում եմ խօստմունքս, այլ տակաւին հանդիստ չեմ դտած. միտքս լիքն է խուռն պատկերներով և դեռ չդիտեմ թէ երբ ներդաշնակութիւն կմտնի այս բաբիլոնեան քաոսի մէջ։ Որպէս մարդու ստամոքսը, նոյնպէս և միտքը կանոնաւոր գործողութեան համար պահանջումեն չափ ընդունած նիւթերի նկատմամբ. եթէ սնունդը չափազանց լինի՝ ստամոքսը աւերվում է, նոյնպէս և միտքը չփոթվում է, երբ յանկարծ անթիւ տպաւորութիւնք աղդեն վրան։

Եւ այս ըստէիս Վիեննայի մէջ եկաւոր հիւրի վրա աղդող տպաւորութիւնքն արդարև չափ ու սահման չունեն և ոչ մի ուշադիր այցելու աղատ չէ մնում սոցա պատճառած մասաւորական յուզմունքից, զի աշխարհահանդիսի զանազան բաժինները պատելով՝ նա տեսնում է առաւել չատ բաներ, քան թէ տարիներ տեղ ճամբորդութեամբ, տեսնում է տաք և սառն կլիմաների արտադրած բազմաձևակ իրերին և ամենայն ինչ որ մարդկութիւնը ի ձեռն արհեստից, արուեստից, մշակութիւն և զիտութիւն կարացել է յառաջ բերել մինչև այս օր։ Նորա աչքին դիպչում են արևելքից և արևմուտքից, հիւսիսից և հարաւից հեռաւորութեան արդելքներն ընջելով ի մի վայր ամփոփուած միլիոնաւոր նիւթեր և մէկտեղ դումարուած ամեն ազդ մարդիկ, որք կամ իրը գործաւոր աղնիւ եռանդով մրցումեն իրարու հետ աշխատութեան անարիւն դաշտի վերայ, և կամ իրրև լոկ այցելուք դիտումեն մերթ բնութեան առատ զանձերն և մերթ մարդկային հանճարի վսեմ յաղթանակները տասնեփներորդ լուսաւոր դարում։

Եկաւորին այնպէս է թւում թէ աղդերն ու երկիրներ իրարուց անջատող ըստ մասին բնական և ըստ մասին մարդկային յիմարութեամբ հնարուած արուեստական խարիսներն վերցրել են, զգում է, որ աղդային թշնամութիւնքը, վայրենի ժամանակներից մնացեալ բիրտ բարբարոսութիւնք են, համոզվում է, որ, բովանդակ մարդկութիւնն եղբայրական մէկ ընտանիք է և կամենում է հաւատալ, որ կոյր ֆանատիկոսութեամբ մինչև այժմ իրարու դէմ չարիք նիւթող կրօնները, կարող են վերջապէս հաշտուել և տեղի տալ որ աղգերը միմեանց գիշատելու փոխարէն՝ սիրով միանան աշխատութեան և լուսաւորութեան պայծառ ասպարիզի վրա։

Այո, ես հաւատում եմ Սէն-Սիմոնի խօսքին թէ՝ «բանաստեղծերի ոսկի դարը մեր ետը չէ, այլ առջևն է», և տօնական զուարթ զգացմամբ՝ ըստ հաճոյից քայլերս փոխելով՝ կարճ միջոցին Անգլիայից դնում եմ Չինաստան, Հնդկաստանից Սիբիր, Ռուսաստանից Եգիպտոս, Ճափոնիայից Տաճկաստան, Բրազիլիայից Զուիցերիա, Ֆրանսիայից Պարսկաստան, Գերմանիայից Բուխարա, Թունիսից Հիւսիսային-Ամերիկա, Ավստրիայից Ավստրալիա, Իտալիայից Շուէդիա, Ալժիրից Կովկաս և այն և այն և սիրտս հրճվում է, երբ տեսնում եմ այս երկրների որոշ յատկութիւնքը, հիանալի բերքը, բնակիչների աշխատութեան ճոխ արդասիքը, զորս ամեն մի երկիր՝ իւրեան սահմանեալ բաժնի մէջ՝ լիութեամբ դրել է ի տես աշխարհի։

Բայց ուր է Հայաստանը, ուր են հայերը և ինչու չեն երևում այս համաշխարհական տօնի մէջ։

Մթթէ մեք իրաւ այն աստիճանի կորած և յետ ընկած ազգ ենք, որ չենք կարող միւս ազգերի կարգն անցնելով պարզերես ասել, թէ մեք ևս ի զուր չենք ապրում երկնքի տակ, մեք ևս աշխատում ենք և աւասիկ մեր արդար քրտնքի ապնիւ պտուղները։ Ասում են թէ հայերն առևտրի ընդունակ մարդիկ են. զուցէ իրաւ է։ Սակայն ուր են նոցա գործունէութեան հետեանքը, որք զէթ մասամբ իւրք հաւասարվէին եւրոպական ուսմամբ առաջնորդվող օտարազգի վաճառականութեան յառաջ բերած արդիւնքի հետ։ Մեր վաճառականների վաստակը միշտ անչան և աշխատութիւնը միշտ ապարդիւն կմնայ, քանի որ նոքա չհրաժարուին այն կորստաբեր և յիմարական կարծիքից, թէ առանց ուսման էլ կարելի է առևտուր տեսնել մեր դարում, և չհամոզվին որ իւրեանց որդիքը երկրին և ազգին օգտաւէտ, գործի հմուտ, ձեռներէց և շրջատես վաճառական լինելու համար ի մանկութենէ արդէն կարօտ են հիմնաւոր կրթութեան և ոչ թէ հայ խանութների ապականեալ օդին, ուր բիւրաւոր մանկունք՝ հնամոլ ծնողների անմտութեամբ՝ ուսանելու ոսկի ժամանակը կորցնելով՝ չարաչար մաշվում են սոսկալի տգիտութեան մէջ։

Թափառական Հրէան անդամ թերևս այնքան պտտած չէր յերկրէ յերկիր, որքան ևս շրջեցի աշխարհահանդիսի բաժիններում հայութեան մի քաղցր նշոյլ որոնելով, բայց չգտայ և ոչինչ որ յիշեցներ ինձ չորս միլլիոն թուող ազգի գոյութիւնը, բացի պ. Միքայէլ Միանսարեանի «Քնարից», որ մնջիկ դրված էր մէկ անկիւնում։

Մինչև այժմ եղած աշխարհահանդեսներն ես չեմ տեսել։ Լրագիրները վկայում են որ վիեննայինը արտաքին շքեղութեամբ և ներքին բովանդակութեամբ իւր նախորդներից չատ գերազանց է, թէև նիւթերի դասակարգութեան մէջ չէ ներկայացնում Փարիզեանի յարմարութիւնքը։ Լոնդոնի միեղերական հանդէսը 1862 թուականին ունէր 186, 125 քառակուսի մէթր տարածութիւն, Փարիզինը 1867 թ. 441,750 մէթր, իսկ Վիեննայի նոր հանդեսը ունի 2,330,631 մէթր։

Այս լայնաստփիւռ տարածութիւնը դտնվում է Պրատէր անուն ծառաւէտ կղզու վրա, որ զուարճաէր Վիեննացւոց ամենասիրելի զբօսավայրն է։ Հանդիսի սահմանի մէջ կան երեք գլխաւոր շինուածք, որոց հիմնարկութեան համար պէտք են եղել չատ միլիոններ և տասն հաղարի չափ մշակներ։ Առաջինն է արուեստից հոյակապ քարուկիր պալատը երկու հարիւր հաղար փութ երկաթից չինուած բարձրաղնտակ դրօշաղարդ զըմբեթով—ռօթօնդ,—որոց վրա ելանում են խումբ խումբ մարդիկ բոլոր հանդէսը, ընդարձակ քաղաքը, մօտաւոր շրջակայքն ու հեռաւոր դաշտերը, գետերը, ու լեռները տեսնելու համար։ Գմբեթի տակ պալատի կեդրոնում կանգնած է մի սիրուն ջրբուղխ և սորա շուրջ կողմը կազմում է 102 մէթր դրամագիծ ունեցող, կամարաւոր մեծ սիներով պարփակեալ մի բոլորաձև հրապարակ, որ կարելի է ասել ամբողջ աշխարհահանդիսի սիրտն է։ Այստեղ իւրաքանչիւր ազդ դրել է միայն այն իրերի տարազները, որոց մշակութեան մէջ ընդհանուր վկայութեամբ ինքն առաջինն է համարվում և որք արդէն գլխաւոր մրցանակի արժանի են դտնված միւս հանդէսների ժամանակ։ Բովանդակ չինութիւնն ունի չորս ահագին դռներ. հիւսիսայինն և հարաւայինը տանում են ուղղակի հրապարակ, որից դէպի արևելք և արևմուտք դնում են փառահեղ, բարձր, սիւնազարդ և լիւսաւոր սրահներ 905 մէթր երկարութեամբ և 25 մէթր լայնութեամբ և այս երկու գլխաւոր թևերը բաժանվում են դէպի հարաւ ու հիւսիս նայող բազմաթիւ կողմնակի սրահներով, որոց մէջ կարելի է մտնել կամ ներքին հրապարակից գալով և կամ դրսից, զի ամեն մինը երկու ծայրից մի մի արտաքին դուռն ունի։ Այս չինութիւնը բռնում է 103,000 քառակուսի մէթր։

Երկրորդ մեծ չինութիւնն է մեքենաների պալատը, որոյ երկարութիւնն 990 մէթր է և լայնութիւնը 28։ Երրորդն էլ վերջապէս պատկերների և անդրիների չքեղ պալատն է։ Այս երեքից դատ կան և ուրիշ բաղում չէնքեր, որք դրուած են կամ արձակ հրապարակի վրա և կամ ստուերաւոր ծառաստանում։ Աշխարհահանդիսի ոլորապտոյտ ուղիները շրջելով՝ այցելուն տեսնում Ռուսաց և Աւստրիացւոց կայսրի ջոկ ջոկ պալատները, Սուլթանի, Շահի և Գետիմէի արևելեան փարթամ շքեղութեամբ զարդարուն ապարանքը, Մահմեդի մզկիթը, Ահմեդի ջրհորը, եգիպտական տաճարը, Ամերիկայի, Զուիցերիոյ, Շուէդիոյ և Գերմանիոյ գեղեցիկ վարժարանները, զանազան կամուրջների տեսակներ, կոթողներ, Սէն Գոթարդի թունելը, այլ և այլ ազգաց պանդոկներ, սրճարաններ, գիւղական տներ, գոմեր, թափառիկ ցեղերի վրաններ, եւրոպական և ասիական՝ մանաւանդ չինական և ճափոնական կրպակներ, միջազգային գրախանութ, ընթերցարան, հեռագրատուն, այնուհետև պատերազմական նաւաշինութիւն և ծովային զարծոց երկրագործութիւն, գիւղական անտեսութեան, անտառատեսութեան, լեռնական հանքերի, բոյսերի և ծաղիկների, կանանց ձեռագործութեան զատ զատ քարաչէն կամ փայտաչէն սրահներ և այլն և այլն, յորոցմէ իւրաքանչիւրը դէթ մէկ օր է պահանջում ուշադիր զննութեան համար։ Բացի այսմանէ կան և այնպիսի մեծադին չէնքեր, զորս հիմնել են կամ առանձին մարդիկ և կամ ջոկ ջոկ ընկերութիւնք. օրինակի համար՝ իշխան Շեվարցենբերդի սքանչելի տաղաւարը (պավիլիոն), ուր դրուած են իւր արքայական կալուածքի բազմատեսակ բերքերը և զանազան գործարանների մշակած նիւթերը։ Յետոյ Վիեննա հրատարակվող «Նոր Ազատ Մամուլ» դիրմանական լրագրի սրահը տպարանի վերաբերեալ բոլոր նիւթերով, ուր մի չոգեշարժ վիթխարի մեքենայ ինքը կարում է թուղթը, դնում մամուլի տակ և տպում 13,000 օրինակ մէկ ժամուայ մէջ՝ ամէն մի թերթն էլ ինքը ծալելով և կարգ կարգ դիզելով։

Նամակիս նեղ սահմանը չէ ներում ինձ միւս չէնքերն մի առ մի յիշատակելու, էլ ուր մնաց նոցա մէջ դրուած անթիւ անհամար նիւթերը։

Աշխարհահանդիսի զանազան տեղերում ամեն օր ճաշից յետոյ լինում է նուագածութիւն և ունկընդրաց լսելիքը պարարվում են անզուգական Շարաուսի զմայլեցուցիչ երաժշտութեամբ։

Այս չոր ու ցամաք և չատ համառօտ նկարագրից ընթերցողը կտեսնէ, որ էլ բան չկայ որ դրուած չլինէր աշխարհահանդիսում մարդու խելքը, միտքը, սիրտը, աչքը, լսելիքն ու վերջապէս փորը յագեցնելու համար։ Եթէ այս բոլոր բաներից այցելուն կշտանայ, զգայարանները թմրին և էլ չկարանայ ոտքերն շարժել՝ թող բազմի մօտ հարիւր հազար աթոռներից մինի վրա, կամ նստի ձեռաշարժ փոքրիկ կառքերից մինի մէջ, որք ժամը մէկ ֆիորինով միշտ պատրաստ են տանել զնա ուր և կամենայ։

Աշխարհահանդէսը բացուեցաւ մայիսի մէկին, բայց մինչև հիմայ դեռ չատ բան անաւարտ էր և կարելի է ասել որ միայն նորերս վերջացան այս առասպելական մեծ գործի բոլոր պատրաստութիւնքը։

Այցելուների օրական թիւը միջին հաշվով հասնում է 50 հաղարի։—Մուտքի տոմսակի գինն է մէկ ֆիորին, բայց տաս հատն միասին կարծեմ չորս ֆիորին։ Չորեքշաբթի և շաբաթ օրերը մուտքի գինն է կէս ֆիորին։ Աշխարհահանդիսի սահմանի մէջ մտնելուց յետոյ՝ էլ առանձին գումար վճարել պէտք չէ այլ և այլ բաժինները տեսնելու համար։

Լրագիրների հրատարակված լուրերը Վիեննայի մէջ տիրապետող իբր թէ սարսափելի թանգութեան մասին մասամբ իւրք ճշմարիտ էին միայն մայիս ամսի վերաբերմամբ. իսկ այնուհետև նոյն իսկ լրագիրների և քաղաքային վարչութեան շրջանիս տանուտէրերի, պանդոկապետների և միւս սոցա նման օտարի քսակին շատ սիրահար մարդոց յափշտակաւէր եռանդը միանդամայն չիջաւ և այժմ հիւրերի անթիւ բազմութեանը չը նայելով՝ նոքա՝ գոլովում փուղի հաշին գիտցող եկաւորը բաւականին էժան կարող է ապրել Վիեննայում։ Բնակարանի և կենսական պիտոյից գիները համարեա թէ մի և նոյն են, ինչպէս և միւս եւրոպական մեծ քաղաքներում—զանազանութիւնը չատ փոքր է. ուրեմն մերայինք թող չերկնչին այս տեղ գալու։ Փ. Վարդանեան։

29 յունիսի, 73. Վիեննա։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կարծիք կայ որ յուլիսի վերջերում գալու է Թիֆլիս Նորին Մեծութիւն Պարսից Շահը, վերադառնալով իր հայրենիքը։

* * *

„Тиф. Вѣст.“ լրագիրը ասում է՝ յուլիսի մէկից, ինչպէս և դիտաւորութիւն կար, մոցրած է մեր երկրում ծխախոտի և արաղի ակցիզը։ Այդ միջոցը Թիֆլիսում միայն պակասացրեց դինետների թիւը եղած 1500-ից մինչև 600, իսկ ծխախոտի 600 եղած գործարաններից մնացին միայն 9։ Մինչև վեց հազար մշակներ ստիպուած են պրռուել իրանց համար մի նոր պարապմունք։

* * *

Իսպանիայի Բարսելոնա քաղաքում մի պրռուսիացի աղջիկ կառավարում է ապրա-

տամբների զօրքը Կարլիստների դէմ։ Նա 25 տարեկան է, գեղեցիկ է, բարձրահասակ, գլխին հանրապետական գլակ ունի և հագնված է տգամարդու շորով։

* * *

Ամերիկայի նախագահ Գրանտ յայտնել է յունիսի 22-ին, որ 1876 թուին համաշխարհական հանդէսը կը լինի Ամերիկայի Ֆիլադէլֆիա քաղաքում։

* * *

Մենք ստացանք պ. Յովհաննէս Բարայեանցից դարձեալ մի նամակ «Մեղուի» մէջ տպված Ս...Ջ...ի ճանապարհորդութեան մասին յօդվածների դէմ։ Մենք կարծում ենք, որ հարցը բաւական պարզված է թէ պ. Բարայեանցի յօդվածով թէ Ղուբայից գրած պ. Կարապետեանի նամակով (տես «Մշակ» № 21)։ Բայց եթէ «Մեղու Հայաստանի» լրագիրը դարձեալ կը շարունակէ գրել այդ մասին, կամ մի խօսք ասելու լինի անդամ—մենք պատրաստ ունինք պ. Բարայեանցի նոր յօդվածը և այն ժամանակ անպատճառ կը տպենք նրան։

* * *

Վերջին վիճակագրական թուանշաններից երևում է, որ բոլոր երկրագնդի վրա համարվում է 1,380,000,000 բնակիչ, որոնցից 3,80,000,000 պատկանում են կովկասեան 580,000,000 մոնգոլեան, 200,000,000 եթեոփեան, 220,000,000 մալայեան, 1,000,000 ամերիկայի կարմիրների ցեղին։ Բոլոր յիշված ազգերը խօսում են 3,064 լեզվով և դաւանում են 1,000 զանազան կրօնքերը։ Իւրաքանչիւր տարին մեռնում են 33,333,335 մարդ, ամեն օր 91,954, ամեն ժամ 3,730, իւրաքանչիւր րոպէ 60 և իւրաքանչիւր վայրկեան մի մի մարդ։ Յաս հազարից մինը հասնում է 100 տարեկան հասակին։ Հինգ հարիւրից մինը հասնում է 65 տարեկան հասակին։ Պսակվածները առհասարակ աւելի երկար են ապրում քան թէ անպսակ մարդիկը։ Բարձրահասակ մարդիկ աւելի երկար են ապրում քան թէ կարճահասակները։ Կանայք աւելի դիւրութեամբ հասնում են 50 տարեկան հասակին, քան թէ տղամարդիկը։ Մի ինչ թուով մարդի կեանքը տևում է 33 տարի։ Բնակիչների չորրորդ մասը մեռնում է չը հասած 7-որդ տարեկան հասակին, իսկ մարդկութեան ½-ը հազիւ հասնում է 17 տարեկան հասակը։

* * *

Զմեռուայ ժամանակ մի աշակերտ վարժապետին տալիս էր իւր դասի համարը այբենարանից, նա երբէք չէր կարող արտասանել բառս ճոռոմաբանութիւն։ Վարժապետը բարկացաւ, վառարանի մօտից առաց ունելին և սառակ զարկեց երեսի գլխին։ Աշակերտը ուշաթափ գլորուեցաւ գետնին։ Երբ աշխատում էին նորան ուշի բերել, խեղճ երեխան դեռ ևս կրկնում էր ճո...ռո... մ...ռ...և այլն.

Միւս օրը յայտնվում է վարժապետի մօտ երեխայի մայրը և աւելցնում է իւր որդու ուսման համար վճարելի արծաթի վերա մի փոքրիկ գումար ևս, այն պայմանով, որ վարժապետը այլ ևս չը ծեծէ նորան։ «Առանց ծեծի ինչի կը սորվի» ասում է վարժապետը և մերժում է կնոջ առաջարկութիւնը։

* * *

Тиф. Вѣстн. գրում է, Սառատովի ասվեստիկ Բէզիրգանովի նշանակվեցաւ Սաավրապոլի փոստի վարչութեան կառավարիչ։ Թիֆլիսի փոստայում դրամական էկսպէդիցիայի կառավարիչ լինելով, պ. Բէզիրգանովը մեծ համակրութիւն էր ստացել հասարակութեան կողմից։ — Թող չը կարծեն որ Բէզիրգանովին համակրում են միայն ընիկները, որովհետև նա ինքն էլ ընիկ է,—ոչ, մեզ յայտնի են փաստեր, որ օտարները անգամ, ֆրանսիացիք և գերմանացիք Թիֆլիսում զետեղված, չատ են ափսոսում որ Թիֆլիսի փոստային վարչութենից հեռանում է մի ազնիւ, ճիշդ, և հասարակութեան պահանջներին ուշադիր պաշտօնեայ։

* * *

Խմբագրութիւնս չնորհակալութեամբ ստացաւ հետևեալ երեք գրքոյկները՝ «Անբաղդ Սանդուխտ Աղուանցի» (մասն առաջին), «Նուէր ուղղափառ քրիստոնեաներին (տետր. ա) և «Յուցակ յիշատակարանի» (մասն Ա.)։ Երեք գրվածներն էլ հեղինակեց Մովսէս Զօհրապեանցը։ «Նուէրը» հրատարակված է հեղինակի պատկերով։

* * *

Յուլիսի 8-ին, կիրակի օր, երեկոյեան ժամը 8-ին, անցկենալով Ալէքսանդրեան պարտէզին կպած փողոցի միջով, գեներալ Միրսկու տան դիմաց, մենք ականատես էինք հետևեալ տեսարանի։ Սարին ժողովրդի մի մարդ (հայ թէ վրացի) չը նայելով, որ փողոցները լի էին անց ու դարձներով, յարձակվում է մի խեղճ պառաւ կնոջ վրա և ուզում է նրան կողոպտել։ Կինը ընկնում է երկաթեայ վանդակի վրա, ջարդում է իր գլուխը, ախպէս որ արիւնը վազում է,—իսկ մարդը երբ տեսնում է որ մենք մօտենում ենք, փախչում է և նրան բռնել չեն կարողանում։

* * *

"Journal de Paris" լրագիրը ասում է, որ Անգլիայից գալով մինչև Ֆրանսիայի Շերբուր քաղաքը Պարսից Շահի և նորա սիւտի երկու օրվայ ընթերքը և ճաշը պիտի նստէ 4580 ֆրանկ, ուրեմն հազար րուբլից աւելի։ Շահը չատ սիրում է քաղցրեղէններ։ Նա թէև լաւ մահմետական է, բայց չէ արհամարհում լաւ գինիներ։ Երկու օրվայ ընթացքում նորին մեծութեան և պալատականների սեղանի համար պատրաստած են 6 չիշ Մաղէր գինու, 4 խերէս, 40 Սէն-Ժիւլիան 1843 թուի, 30 Շամպան-Կլիկօ, 6 Ֆին-Շամպան, 2 Կիրշ և 80 չիշ հասարակ գինու։

* * *

Տ...գիւղի հայ քահանան գտնվելով Փ...գիւղում, մի հոգեհացի վրա (քէլէխումը), զողանում է մի քանի դանակ։ Հանդիսականները նկատելով և նորա գրպանից հանելով դանակները, թակելով դուրս են անում գողին։

* * *

Յունիսի 29-ին (նոր տոմարով) մի սաստիկ մրրիկ է եղել Վիէննայում։ Մասնաւոր աբներից շատերը վնասվել են, ներքին յարկերը լեքցվել են ջրով, սրճանոցներում նստած մարդիկը ստիպվեցան փրկվել վերի յարկերում։ Աշխարհահանդիսի քանի մի բաժինները մեծ վնաս են կրել, մանաւանդ այն շինութիւնները, որք գաւթում էին գտնվում։ Աշխարհահանդիսի հրապարակ տեղերը և այգին, երբ անձրևը դադարած էր անգամ, ներկայացնում էին քանի մի ժամ շարունակ լճակի նման մի տեսարան։ Հանդիսի այցելուները չէին կարող տուն գնալ մինչև որ ջուրը անցկացաւ։ Ֆայէտոնների թիւը չէր բաւականացնում այցելուների պահանջին և շատ թանգ էին, այնպէս որ կանանցից շատերը հետևեալ միջոց գործ դրին իրանց տունը հասնելու համար՝ մշակները շալակեցին նրանց իրանց ուսերի վրա և դուրս տարան թոյլ տեղը ջրի միջով։

* * *

Այս օրերս մենք շնորհակալութեամբ ստացանք Թէոդոսիայից նոր պատկերազարդ „Դատարակ" հայ ամսագիրը։ Բաժանորդութիւնը հաշվելու է յունիս ամսից։

Ամսիս 2-ին, Ս. Պետերբուրգում կատարվել է 5% (հինգ տոկոսաբեր) Առաջին Ներքին փոխառութեան տոմսակների վիճակախաղը և հետևեալ տոմսակներին են ընկել գլխաւոր տանելի գումարները։

№ Սերի.	№ Տոմ.	Տարած գում.
8,402.	8	200,000
15,495.	49	75,000
10,074.	34	40,000
9,148.	21	25,000
13,441.	12	
17,314.	8	10,000
4,036.	10	
1,187.	2	
16,773.	48	
7,858.	6	8,000
3,046.	17	
1,139.	35	
9,801.	43	
13,736.	7	
9,023.	24	
7,526.	9	
19,475.	32	
19,626.	35	
5,084.	2	
10,038.	34	
15,244.	16	
17,573.	14	1,000
10,248.	29	
4,074.	37	
2,960.	44	
14,947.	33	
6,953.	43	
9,729.	22	
8,881.	45	
17,324.	2	
17,545.	48	
6,486.	37	
5,208.	17	
5,057.	20	
14,530.	11	
1,110.	21	
9,933.	31	5,000
8,439.	14	
14,413.	44	
11,939.	36	

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մեր ժողովուրդը զարմանալի ժողովուրդ է։ Ամեն տեղ լրագիրներին գրվում են այսպէս՝ ուղարկումեն լրագրի տարեկան գինը և այնուհետև ստանում են լրագրի համարները։ Ստացած համարները արդէն ապացոյց են որ փողը հասաւ խմբագրութեան։ Երբ մեզանում ստիպված է խմբագիրը դեռ ևս փող չը ստացած համարները ուղարկել,—լրագրի տարեկան կամ կէս տարվայ վճարը համարվում է ստացած և խմբագրութեան կողմից սա առանձին հաւատարմութեան նշանն է որ համարները ուղարկվում են առանց փողի։ Բայց դարձեալ մեր մեջ չը հասկանալով որ ուղարկվող լրագրի համարները ամենաւաղ ապահովագիր են, փող ուղարկելու ժամանակ խնդրում են խմբագրից որ դարձեալ նամակ գրէ թէ փողը ստացած է։ Ասացէք խնդրեմ պարոններ, եթէ խմբագիրը 500 կամ 600 ասորագրողներ ունենալով իւրաքանչիւրին պիտի նամակ գրէր որ փողերը ստացած են,—հէր կը մնար նրան ժամանակ։ Աւելի լաւ ապացոյց չէ թէ փողերը ստացած են, որ ձեզ ուղարկվում են լրագրի համարները...իսկ եթէ գիտէք, որ ձեզ հաւատարմութիւնն են ընծայում (որ ոչ մի երկրում չէն անում) գիտէք որ փողերը հասուցած չէք,—ինչի չէք ուղարկում։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԹԻՖԼԻԶԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ
(Յուլիսի 11-ին)։

ՈՍԿԻՆ, (պօլուիմպերիալ). . . .	6 ռ.	8 կ.
ԲԱՄԲԱԿԸ Երևանու.	3 „	40 „
„ երկրորդ տեսակը. . .	3 „	— —
„ Ամերիկայի սերմից .	7 „	— —
ԲՈՒՐԴԸ Թուշի	6 „	50 „
„ „ երկրորդ տեսակը	6 „	10 „
„ Թարեքեամի	5 „	— —
ՇԱՔԱՐԸ Ռսի (Բրօցկու) . . . ,	7 „	60 „
„ „ միւս տեսակը . .	7 „	40 „
„ զագրանիցու տրանցիդ.	5 „	20 „
մաքսը վճարած . . . . . , ,	8 „	30 „
ՇԱՔԱՐԱԻԱԶԸ Ռսի.	6 „	30 „
ՂԱՀՎԱ Լիվանի լաւը.	15 „	— —
„ Մօկօ, չատ լաւը . . .	16 „	50 „
„ Մարտինիկոի, ցածրը .	12 „	— —
ԱԼԻՒՐԸ Երևանի առաջին տեսակը	1 „	35 „
„ „ երկրորդ տեսակը	1 „	20 „
ԱԼԻՒՐԸ Գեանջու հասարակ . .	1 „	60 „
„ Շորագեալու	1 „	45 „
ԳԱՐԻՆ Երևանի. . . . . , . . ,	— „	— 80
ՊՂՊԵՂԸ	11 „	— —
ՇԻՐԲԱԽՏԻ ձէթ.	9 „	— —
ՄՈՄ	11 „	80 „

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՎԱՃԱՌԱՆՈՑ

ՓՈԽԱՆԱԿ. բարաթ պօլա. . . վճա. . .	6—70
„ „ Թաւրիզում վճա. . .	4—76
ՄԱՐՍԵԼ և Փարիզ, 100 բուբլին ածէ.	345½ ֆր.
ԼՕՆԴՕՆԻ վերա, (Օդէսայի կուրսը) 7 բուբլի 41½ կոպէկը ածէ.	1 լիրա
ՄԱՐՍԵԼՈՒՄ բամբակի 50 քիլօ (3 փութ 2 գրվ.) ծախվումէ.	— —
(ՄԱՐՍԵԼՈՒՄ Երևանու Ամերիկ. սերմի բամբակը ծախվումէ .	90 ֆր.
„ առաջին տեսակը. . . .	65 ֆր.
„ երկրորդ տեսակը . . .	50 ֆր.
ՄԱՐՍԵԼՈՒՄ Թուշի սպիտակ բուրդը ծախվումէ	105 ֆր.
„ երկրորդ տեսակը. . .	99 ֆր.
„ գառան բուրդը ածէ . .	108 ֆր.
„ Թարաք. բուրդը ածէ . .	75 ֆր.
„ Ղարաբ. բուրդը ածէ . .	60 ֆր.
„ երկրորդ տեսակը. . .	56 ֆր.

ԿՕՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՑ խարջ Նուիվայ Թեն (մետաքսը) չատ ընտիրը 134 բուբլի։

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԿԱՐԻՉ ՅՈՎՆԱԹԱՆԻ ԵՐԳԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Յանկանալով մեր ապագրութեամբ ի լոյս ընծայել աշխարհիկ Հայ լեզուաւ մի պատուական երգարան, զոր աշխատասիրած է բազմավաստակ Ծերունի Յովհաննէսը՝ որոյ հնա իրրև յաւելուածք տպագրելու են նաև շատ թուով զանազան գաւառական լեզուաւ հայերէն անծանօթ երգեր, ուստի խոնարհաբար կը հրաւիրեմ իմ սիրելի Հայ եղբայրներն մասնակցել բաժանորդագրութեամբ այս ազգօգուտ և գեղեցիկ աշխատասիրութեանը։

Այն գիրքս պիտի տպագրուի մաքուր թղթի վերայ և գեղեցիկ տառերով։ Բաժանորդագրութեան գինն է իւրաքանչիւր հատորին 40 կոպէկ, որոյ մէջն է նաև բոլոր ճանապարհի ծախքը տեղն հասուցանելու համար Ռուսաստան՝ փոստայիւ իսկ Տաճկաստան և Պարսկաստան այլ ապահով եղանակաւ և իմս պատասխանատուութեամբ։

Մեր և ամէն հայի ցանկութիւնը պիտի լինի որքան կարելի է շուտով ի լոյս ընծայել այս պատուական երգարանը, ուստի և ով որ յօժարում է մեր ձեռնարկին օգնական լինել բաժանորդութեամբ, թող բարեհաճի փութով հաղորդել մեզ։

Պիտի տպագրուի նա և վերջինը բաժանորդաց մեծարելի անուանքը այբենական կարգով։

Բաժանորդ դրուողները կարող են յայտնել իրանց ցանկութիւնը հետևեալ հասցէով։ Ի Վաղարշապատ (ի Ռուսաստան) Միքայել Յովհաննիսեան Յովնաթանեանցին։

Въ сел. Вагаршапатъ Михаилу Ивановичу Авнатамову.

Միքայել Յովհաննիսեան Յովնաթանեանց
ի 15 Յունիսի 1872 ամի։

1860 թուից սկսած ես միշտ պարապում էի Ծխախոտի առուտուրով, բերելով Թիւրքայից Ծխախոտը և ունելով Թիֆլիսում նշանաւոր պահեստներ Թուրքաց Ծխախոտի տերևներից և թէ Թիֆլիսի թէ այլ քաղաքների գործարանները ինձ մօտ անդադար առնելով միշտ բաւական էին մնում իմ հացրած ապրանքովս։ Այժմ բացի Խերեդինովի քարվանսարայում ունեցած պահեստից ես յուլիսի 1-ից բաց եմ անում Ծխախոտի դրծարան։

Յայտնելով այս Թիֆլիսի պատուելի հասարակութեանը և Ռուսաստանի ուրիշ քաղաքների, խնդրում եմ խոնարհաբար իրանց պահանջներով դիմել ինձի և ես յուսով եմ, որ իմ պահեստից Ծխախոտի տերևների առնողները, այդ արդիւնքի թէ էժանութեան և թէ արժանաւորութեան պատճառով բաւական կը մնան։

Գների ցուցակը առանձին կերպով իր ժամանակին կը յայտնվի։

Էխալցխայի քաղաքացի
Եղիազարը Յովհաննիսեան ԱԶՆԱՈՒՐՈՎ

Ծխախոտի գործարանը գտնվելու է քաղաքս 1 բաժնի 6-որդ ուչաստկում Ամենանոսկի բազարի (միջի փողոցի) մօտ սահմանաւոր Կամէլի տանը։ Գլխաւոր խանութը № 3 Գօլովինսկի պրոսպէկտում Աւլքսանդրեան այգու մօտ, պ. պ. Բուչիկիի և Աղիվանիի տանը, իսկ ուրիշ խանութները Կուկիում Միքայելեան փողոցի վրա Աստուածածնայ եկեղեցու մօտ և վերջապէս Երևանեան հրապարակի վրա Եւրոպա հիւրանոցի դիմաց Սուսանովի տանը։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ահագնութեան և ապրանք պահելու վարձանների հատուցմամբ
Հիմնական դրամագլուխ 3,000,000 բուբլ արծ.

Ապահովութիւն կրակի դէմ ամեն տեսակ շարժական և անշարժ կայքի՝ տների, խանութների, ապրանքի, ֆաբրիկաների, գաւօդների, մեքենի, անասնի կայքի, երկաթուղաշինութիւնների և այլն կայքերի, ամբողջ Անդրկովկասում։ Ապահովացնում է պակաս գնով քան թէ այլ ապահովութեան ընկերութիւնները։

Թիֆլիսի գործակատարութեան գրասենեակը գտնվում է Դվորցովի փողոցում, Արծրունու տանը։ (Дворцовая улица, домъ Арцруни).

Дозволено Цензурою. Тифлисъ, 11 Іюля 1873 г. Մելիքովի և ընկ. տպարան Խմբագիր—հրատարակող Գրիգոր Արծրունի